Հավելված
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
11.02.2020թ. թիվ 4/11-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝
Արա Զոհրաբյան

Կ Ա Ր Գ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Այլ պետության փաստաբանի հավատարմագրման մասին» սույն կարգը (**այսուհետ՝ Կարգ**) սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ կամ Պալատ**) անդամ չհանդիսացող, սակայն այլ պետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձին (**այսուհետ՝ Այլ պետության փաստաբան**) Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար հավատարմագիր տալու ընթացակարգը և առանձնահատկությունները:

II. ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

2. Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալիս է Պալատի խորհուրդը կամ Պալատի նախագահը՝ Պալատի կանոնադրության և սույն կարգի համաձայն: Հավատարմագիրը հանձնում է ՀՀ փաստաբանների պալատի

նախագահը:

3. Այլ պետության փաստաբանը կարող է հավատարմագրվել մեկ տարի ժամկետով կամ կոնկրետ գործով:

4. Հավատարմագիրը տրվում է փաստաբանի լիարժեք իրավունքներով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ ծառայողական գաղտնիքին առնչվող հարցերով իրավաբանական օգնություն ցույց տալու իրավունքի) կամ ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանի (օժանդակող փաստաբան) հետ համատեղ մասնակցության պայմանով այլ պետության փաստաբանի իրավունքներով:

5. Այլ պետության փաստաբանը հավատարմագրվելու համար Պալատի նախագահին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) Պալատի նախագահի կողմից սահմանած ձևի դիմում, որում պետք է լինի նաև նշում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պայմաններին ծանոթ լինելու, դրանք ընդունելու և իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ.

բ) այլ պետությունում փաստաբանների միության կողմից տրված արտոնագրի կամ փաստաբանի կարգավիճակը հաստատող համարժեք այլ փաստաթղթի պատշաճ (նոտարի կամ փաստաբանների միության կողմից) վավերացված պատճենը (Արցախի Հանրապետության փաստաբանի դեպքում՝ միայն արտոնագրի պատճենը).

գ) այլ պետությունում փաստաբանների միության կողմից տրված տեղեկանք՝ հավատարմագրման դիմում ներկայացրած այլ պետության փաստաբանի արտոնագրի գործողությունը դիմումին նախորդող 30 օրը չգերազանցող ժամանակահատվածի դրությամբ կասեցված կամ դադարեցված չլինելու վերաբերյալ.

դ) հավատարմագրման համար անհրաժեշտ վճարը մուծելու փաստը հավաստող փաստաթուղթը (դիմումը մերժվելու դեպքում, գումարն ենթակա է վերադարձման), եթե դիմողն ազատված չէ վճարից.

ե) անձնագրի պատճենը.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չտիրապետելու դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանի (**այսուհետ՝ Օժանդակող փաստաբան**) գրավոր հավաստումը՝ Այլ պետության փաստաբանին օժանդակություն ցույց տալու մասին:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերենով կամ հայերենով պատշաճ թարգմանությամբ (նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ կամ որակավորված թարգմանչի կողմից հաստատված): Սույն կանոնից բացառություն կարող է սահմանել Պալատի խորհուրդը:

7. Առաջին անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի խորհուրդը՝ դիմումը ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

8. Օժանդակող փաստաբանի հետ մասնակցության իրավունքով հավատարմագիրը տրվում է պարզեցված կարգով (առանց ՀՀ օրենսդրության մասին հարցազրույցի կամ ստուգման)՝ այլ պետության փաստաբանի դիմումի հիման վրա՝ օժանդակող փաստաբանի գրավոր համաձայնության և Պալատի խորհրդի սահմանած այլ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Պարզեցված կարգով հավատարմագրման հարցը քննարկելիս, այլ պետության փաստաբանի ներկայությունը Պալատի խորհրդի նիստին պարտադիր չէ, բացառությամբ այն դեպքի, երբ խորհուրդը որոշում է կայացրել այլ պետության փաստաբանին նիստի հրավիրելու մասին:

9. Փաստաբանի լիարժեք իրավունքներով հավատարմագիրը տրամադրելու համար Պալատի խորհուրդը հարցազրույցի, թեստի կամ այլ եղանակով պարզում է այլ պետության փաստաբանի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը տիրապետելու հանգամանքը, բացառությամբ Արցախի փաստաբանին հավատարմագիր տրամադրելու դեպքի: Հայերենին չտիրապետող այլ պետության փաստաբանը Պալատի խորհրդի նիստին մասնակցում է իր կողմից և իր հաշվին հրավիրած թարգմանչի հետ միասին: Հարցազրույցի և թեստի հարցերը կամ առաջադրանքները կազմում, ինչպես նաև այլ պետության փաստաբանի՝ ՀՀ օրենսդրությանը տիրապետելու փաստը ստուգելու հարցում Պալատի խորհրդին օժանդակում է Պալատի որակավորման հանձնաժողովի քարտուղարը: Խորհրդի քարտուղարը գրավոր իրազեկում է այլ պետության փաստաբանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը տիրապետելն ստուգելու ժամանակի, վայրի, ինչպես նաև եղանակի մասին: Նշված գործընթացը կարող է ձայնագրվել (տեսաձայնագրվել):

(կետը լրացվել է 04.04.2025թ. թիվ 7/7-Լ որոշմամբ)

10. Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի նախագահը՝ դիմումը ստանալու պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում: Սույն կետում նշված դեպքում Այլ պետության փաստաբանից, բացի դիմումից, լրացուցիչ փաստաթղթեր պահանջվում են ըստ անհրաժեշտության: Հավատարմագրում նշված Օժանդակող փաստաբանի փոփոխությունը կատարվում է Պալատի նախագահի որոշմամբ:

11. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չտիրապետող Այլ պետության փաստաբանին տրվող հավատարմագրի մեջ նշվում է նաև՝ **ա)** Օժանդակող փաստաբանի անունը, ազգանունը, **բ)** Օժանդակող փաստաբանի արտոնագրի համարը և **գ)** հավատարմագիրը միայն Օժանդակող փաստաբանի մասնակցության պայմաններում ուժի մեջ լինելու մասին:

12. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը մերժում է Այլ պետության փաստաբանի հավատարմագրումը, եթե՝

ա) չեն պահպանվել Կարգի, մասնավորապես 5-րդ և 6-րդ կետերի պահանջները, կամ

բ) չեն հաստատվել ներկայացված փաստաթղթերի իսկությունը կամ հավատարմագրման համար դիմած անձը տվյալ գործով իրավունք չունի Հայաստանի Հանրապետությունում զբաղվել փաստաբանական գործունեությամբ, կամ

գ) Օժանդակող փաստաբանի հավաստումը չներկայացրած Այլ պետության փաստաբանը չի տիրապետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

13. «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հավատարմագիր ստացած Այլ պետության փաստաբանին ընդգրկում է այլ պետության փաստաբանների ցուցակում:

14. Հավատարմագրված Այլ պետության փաստաբանը ՀՀ փաստաբանների պալատի անդամ չի հանդիսանում:

III. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը կարող է ուժը կորցրած ճանաչել (դադարեցնել) Այլ պետության փաստաբանի հավատարմագրի գործողությունը, եթե՝

ա) Այլ պետության փաստաբանը խախտել է «Փաստաբանության մասին» օրենքի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի որևէ պահանջ.

բ) Այլ պետության փաստաբանը կոնկրետ գործով հավատարմագրված լինելով այլ գործով դատական ներկայացուցչություն կամ պաշտպանություն է իրականացրել.

գ) դադարեցվել կամ կասեցվել է Այլ պետության փաստաբանի փաստաբանական գործունեության իրավունքն այն երկրում, որտեղ իրեն տրամադրվել էր այդ իրավունքը.

դ) Օժանդակող փաստաբանը գրավոր հրաժարվել է իր հավաստումից և Այլ պետության փաստաբանը Պալատի նախագահի գրությունը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում չի ներկայացրել այլ Օժանդակող փաստաբանի հավաստում.

ե) հավատարմագրված փաստաբանը գրավոր դիմում է ներկայացրել իր հավատարմագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ.

զ) ի հայտ է եկել սույն կարգի 12-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը.

է) այլ պետության փաստաբանը խախտել է սույն կարգի 25-րդ կետի պահանջները:

16. Հավատարմագրի գործողությունը համարվում է դադարած Պալատի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎՃԱՐԸ

17. Կոնկրետ գործով հավատարմագիր ստանալու համար վճարի չափը սահմանվում է **200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**, բացառությամբ սույն կարգի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերում նշված դեպքերի: Հավատարմագրի գործողությունը տարածվում է քաղաքացիական, քրեական կամ վարչական կոնկրետ գործի բոլոր հաջորդական փուլերի (մինչդատական վարույթ, դատական ատյաններ), ինչպես նաև նույն գործով այլ վստահորդների նկատմամբ: Սույն կետում նշված գործով տրված հավատարմագրի մեջ նշվում է գործի համարը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործն անհատականացնող այլ տվյալներ:

18. Մեկ տարվա ժամանակահատվածով հավատարմագիր ստանալու համար վճարի չափը սահմանվում է **1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**, բացառությամբ սույն կարգի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերում նշված դեպքերի:

19. Հավատարմագրման վճարն Այլ պետության փաստաբանը վճարում է անկանխիկ՝ ՀՀ փաստաբանների պալատի հաշվին փոխանցելու միջոցով կամ կանխիկ՝ ՀՀ փաստաբանների պալատի դրամարկղում:

20. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կամ նախագահի կողմից

հավատարմագրվելու համար դիմած անձին վերադարձվում է իր կողմից վճարված գումարը, եթե վերջինիս դիմումը մերժվում է:

21. Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրման համար դիմելու դեպքում, Այլ պետության փաստաբանը պարտավոր է կրկին կատարել համապատասխան վճարումը:

22. Արցախի Հանրապետության (**այսուհետ՝ Արցախ**) փաստաբանը ազատվում է Այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճարից, եթե'

ա) սույն կարգի հաստատման օրվա դրությամբ ունի Արցախում փաստաբանական գործունեության առնվազն հինգ տարվա ստաժ, կամ

բ) մինչև 2023 թվականի հոկտեմբերի 5-ն առնվազն հինգ տարի մշտապես բնակվել է Արցախում, կամ

գ) հանդիսանում է Արցախի հանրային պաշտպան և ներկայացրել է Արցախի հանրային պաշտպան հանդիսանալու վերաբերյալ ապացույցը' Արցախի փաստաբանների պալատի հետ ունեցած աշխատանքային պայմանագրի պատճենը' վավերացված Արցախի փաստաբանների պալատի կողմից:

(կետը վերախմբագրվել է 19.02.2024թ. թիվ 3/12-Լ որոշմամբ)

23. Սույն կարգի 22-րդ կետի պայմաններին չբավարարող Արցախի փաստաբանի համար սահմանվում են հետևյալ վճարները'

ա) կոնկրետ գործով հավատարմագիր ստանալու համար վճարի չափը սահմանվում է **30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ**.

բ) մեկ տարվա ժամանակահատվածով հավատարմագիր ստանալու համար վճարի չափը սահմանվում է **120.000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ**:

24. Պալատի պատվավոր անդամի կոչում ունեցող այլ պետության փաստաբանը ազատվում է Այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճարից և հավատարմագրվում է պարզեցված կարգով:

25. Սույն կարգի 22-րդ կետի «գ» ենթակետում նշված դեպքում Արցախի հանրային պաշտպանին հավատարմագիրը տրվում է միայն հանրային պաշտպանության իրականացման նպատակով, որի մասին հավատարմագրի մեջ կատարվում է համապատասխան նշում: Սույն կետում նշված հավատարմագրով հանրային պաշտպանության ոլորտից դուրս ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելն արգելվում է, իսկ նման հանգամանքի բացահայտումը հիմք է հանդիսանում Արցախի հանրային պաշտպանին տրված հավատարմագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու համար:

26. Հավատարմագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում հավատարմագրման վճարը վերադարձման ենթակա չէ:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Կարգն ուժի մեջ է մտնում ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատելու օրվանից և գործում է անժամկետ:

28. Կարգում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից:

29. Կարգի հետ կապված մեկնաբանությունները

(պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

* * * * *